ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2021 թվականի № Ա
ք. Երևան

«ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԷ№0660 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի մայիսի 3-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Էներջի էս Ջի էյ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №481Ա որոշմամբ «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի «ՍՈՒՄԵՑ ՋԻ ՓԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ԼԷ№0660 լիցենզիան վերաձևակերպելու մասին» №175Ա որոշմամբ «ԷՆԵՐՋԻ ԷՍ ՋԻ ԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ վերաձևակերպված ԼԷ№0660 լիցենզիան՝ լիցենզիայի պայմաններում «գտնվելու վայրը» տողը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ն. Ադոնցի 8 շենք, բնակարան 82»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մայիսի 6-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- մայիսի 2021թ.